

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ

ԲԸՐՈՅՆԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԳԻՏԿԱՆ

Կը Քրիստոսականի առհէ աւելոյ սկիզբը:
 Քսոսմոնդոսը յիշում գիւմ է կամիկի վճարելի՜ Տա-
 րիկան Ե ֆրամբ. — Վեցսմոնտայ՝ 5 ֆրամբ: —
 Մէկ յիշ առանձին կը վճարտուի 1 ֆրամբի:
 Խոսքագրութիւնում կենդրոնաւորայրն է՝ Վիեննա, Մի-
 յարեան Արքայաւանդիւնում Մայր վամբը:

Արեւելք՝ ի Կոստանդնուպոլիս եւ ի Ջիդանիս՝ նոյն
 Միայնաւանդիւնում վաճառուանիւնիւ կը ճորու-
 անի առանց ծախքի: Թախոյն:
 Արեւելքի ուրիշ քաղաքներում նոյնպէ՜ չի ճորու վա-
 ճառուանիւնիւ կը սկսի ծախքի: Թախոյն հաշուի:
 Ժամանցմանքն առանձին սակարկութիւնում:

ԲՈՎԱՆԳԵԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԿԱՆ

ԲՆԱԳԻՏԱՎԱՆ — Լուսոյ եւ ընթութեան էութիւնը:
 ԲՆԱԳՈՒՄՆԱՎԱՆ — Քանկան եւ արեւստական քուն:
 ՀՆԱՅՈՍՍԱՎԱՆ — Քրոնոպոլսոյ սեպագիրը:
 ՄԱՆՏՆԱԳՐԱՎԱՆ — Ե, ձանշոյ լինացի նայագէտ
 եւ Կալիթոյ Հայոց զաւտաւեգուն: — Քրիստո-
 նոսայ Հայաստան եւ իւր զրականութիւնը:
 ՊԱՅՄԱՎԱՆ — Արքայ արքայ:

ԲՈՎԱՆԿԱՆ

ՊԱՅՄԱՎԱՆ ՆՈՐԱՎԱՊ — Գաւսիկիւն:

ՄԱՆԿԱՆ

ՆՈՐԱՎԱՊ — Տոնստեպան — ՄԱՆԱՎԱՊԱՐ

ՔԱՂԱՔԱՎԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՐՈՍՈՒՄՆԵՐԱՆ

ԲՆԱԳԻՏԱՎԱՆ

ԼՈՐՈՍ ԵՒ ԶԵՐՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԻՒՆ

Ն. ՆՈՍ

(Ըրեւելիս-Բիւն)

Ինչո՞ւնս Եւնիկ անգրիացի գիտոյն վերա-
 պահեալ էր լուսոյ էութեան ինչորն ընդարձա-
 կագոյն ապարեղ մը հանել: Մտադրութեան
 արժանի է, որ Եւնիկ իւր համբաւն ու լուսոյ
 ճշմարիտ էութիւնն աճառի փրկից փողփողուն
 գոյները մեկնելով գտաւ: Քանիներ իրմէ յա-
 ուաջ աճառի փրկից պղպղակին վրայ տեսնուած
 գունագեղ փողփողուն խաղերը տեսած էին:
 Բայց ոչ որ անով զբաղեցաւ, ոչ որ մտածեց ասոր
 պատճառին եւ պահանջեալ պայմաններուն վրայ՝
 որոնց սոյն երեւոյթն իւր գոյութիւնը պարտա-
 կան է. ոչ որ մտքէն անցուց՝ թէ հոս պէտք
 է փնտել լուծման բանալին պէսպէս երեւութից,
 զոր լուսոյ ճառագայթներն բխիցես եւ ընդ

միշտ դարձեալ ու դարձեալ մեր առջեւ կը գնին:
 Եւնիկ աճառի փրկից եւ ընդհանրապէս անօր
 ցանցակերպներու գոյները քննելով Կրիմալտի
 ճօճան Թեորիան (Théorie de vibration) հա-
 սաւ: Ինչպէս որ օդոյ կոհակաձեւ ճօճամբ, կը-
 սէր ինք, մեր ականջաց մէջ ձայնի ազդեցութիւնը
 կը ծնանի, նոյնպէս մեր աչաց մէջ լուսոյ ազդե-
 ցութիւն կը ծնանի յանաճմանն անօր եւ բով-
 անգակ տիեզերաց վրայ տարածուած հեղանի-
 թին՝ պայնքն եթերի կոհակաձեւ ճօճամբ: Այս
 եթերն՝ որովհետեւ այնպէս անօր ու նուրբ է որ
 անհնար է երեւակայել, ամէն մարմնը թափ կ'ան-
 ցնի. եւ այն մարմիններն որ կրնան զինք ճօճե-
 ցնել, Ինչո՞ւնս մարմին կը կոչուին: Եթերին
 կոհակաձեւ ճօճանները գրեթէ ջրոյ ալեաց
 պէս են, եւ կրնայ այս վերջոյց վրայէն իմացուիլ
 առաջիններուն վրայ հանդիպածն: Ամենապարզ
 փորձն այս նկատմամբ հետեւեալ երեւոյթներն
 յառաջ կը բերէ: Եթէ ջրոյ երկու ալեք այն-
 պէս իրարու հանդիպին, որ երկու ալեք լեռ-
 ներն իրարու հետ միանան, այն առեւ մի միակ
 մեծցած ահագին լեռ կը կազմեն. նոյնպէս ալեք
 երկու ձորք մի միակ խորագոյն ալեք ձոր յա-
 ուաջ կը բերեն: Իսկ եթէ ալեք լեռն ալեք
 ձորի հանդիպի, երկուքն ալ փոքր ի շատէ զիրար
 կ'եղծանեն, եւ հոն ջրոյ մակերեւոյթը միայա-
 դաղ հարթ հաւասար կ'ըլլայ: Նոյնք կը հանդիպի
 լուսոյ ալեքաց ալ: Եթէ լուսոյ երկու ճառագայթ, որ
 իրարու մօտակց լուսոյ կէտերէն կ'արձա-
 կուին, իրարու հանդիպին, այն տեղերն ուր ա-
 լեք լեռներ կամ ձորեր զիրար կը կորեն, կը
 պայծառացնեն լոյսը. իսկ այն տեղերը զիրար կը
 տկարացնեն եւ ըստ հետեւորդի խաւար կը
 ծնանին, ուր ալեքաց լեռն ալեքաց ձորի կը հան-
 դիպի: Այս է Կրիմալտի փորձն ամենապարզ
 մեկնութիւնը:

672-58

